ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2024» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ

03.02.2024 19:26

Մեկնարկել է **«Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2024»** ֆուտբոլային մրցաշարը:

Մրցաշարի ընթացքում հաղթանակի համար պայքարելու է տասներեք թիմ:

Թիմերը ձևավորվել են ՀՀ փաստաբանների պալատի և Արցախի փաստաբանների պալատի փաստաբանների, ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմի, դասախոսական կազմի, ունկնդիրների և Հանրային պաշտպանների կազմերով:

Այսօր տեղի է ունեցել թիմերի առաջին հանդիպումը, միմյանց դեմ մրցել են «Խուստուփ» և « Վիրտուոզ», «Բաստիոն» և «Արծվաշեն», «Արցախ-Երևան» և «ՀՊԳ -Կայծակ» թիմերը:

Հաջորդիվ խաղերում սպասվում է «Չեմպիոն» և «Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներ», «Արարատ» և «Մերենգես», «Փաստաբանական ակադեմիա» և «Արմավիր» թիմերի հանդիպումները:

Առավելության հասած և լավագույն արդյունք ցույց տված թիմերը դուրս կգան հաջորդ փուլ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })